



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. ՂԱԼԵԶՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի և 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 2-ի N 33-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված N 3 հավելվածի 4.3-րդ և 4.5-րդ կետերի և հիմք ընդունելով Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Եղվարդի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի կողմից ընդունված ներքին և անհատական իրավական ակտերի հաշվառման մատյանի (*սկսված է 27 ապրիլի 2008 թվական*) ուսումնասիրության արդյունքները՝ **կարգադրում եմ.**

1. *Արման Հովհիկի Ղալեչյանին* 2019 թվականի հոկտեմբերի 15-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Եղվարդի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ *լուծելով նրա հետ 2017 թվականի մայիսի 12-ին կնքված N 1 աշխատանքային պայմանագիրը:*

2. Մինչև մրցույթի արդյունքներով (*տնօրենի թափուր պաշտոնում*) պաշտոնի նշանակումը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Եղվարդի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել *Վահիկ Վարազդասրի Վարդանյանին:*

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Եղվարդի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանձնման-ընդունման աշխատանքները և ներկայացնել համապատասխան արձանագրություն:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2019 թվականի հոկտեմբերի 15
ք. Հրազդան
N 195-Ա



Բ. ՊԵՏՐՈՍՅԱՆ